ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ N 12

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

---

Արագածի զանգված 18
Վաղարշապատ
Արմավիրի մարզ
հեռ: (0231)4-40-75

N: 235 13.07. 2022թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն մարզպետ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում առկա է ,<<Տեխնոլոգիա>> (աղջիկների խումբ, 16 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղ:

Կից ներկայացնում ենք ուսուցչի թափուր տեղի համար տրված հայտարարությունը <<Կրթություն>> շաբաթաթերթում:

Առդիր՝ 1 էջ:

Դպրոցի տնօրեն՝ Ա.Բաբայան

Հայատարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան հ. 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (աղջիկների խումբ, 16 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝ - դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի, - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), - անձը հաստատող փաստաթուղթ, - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում), - ինքնակենսագրություն (Ձեւ 5), - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ, - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են հուլիսի 13-ից մինչեւ հուլիսի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա հուլիսի 28-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան հ. 12 հիմնական դպրոցում, հասցեն ք. Էջմիածին, Արագածի զանգված 18: Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 85-31-10 հեռախոսահամարով: